համապատասխանում է վերոգրյալ իրավանորմերի պահանջներին և այն անվավեր ճանաչելու համար առկա չեն հիմքեր, ինչի պայմաններում Հայցվորի ներկայացրած առաջին պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Հայցվորի Հրավերի՝ ձեռք բերվող ծառայությունների տեխնիկական բնութագրի վերաբերյալ արտահայտած դիրքորոշմանը, ապա Դատարանը դրան չի անդրադառնում, այն հիմնավորմամբ, որ այդ դիտարկումները վերաբերում են հրավերի պահանջին, իսկ Հայցվորը սահմանված ժամկետում չի բողոքարկել Հրավերի պահանջը:

Անդրադառնալով Հայցվորի մյուս պահանջներին՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ածանցյալ էին վերոգրյալ առաջին պահանջին, դրանք ինքնուրույն պահանջներ չէին, հետևաբար առաջին պահանջի մերժումը ինքնաշխատ կերպով հանգեցնում է նաև մյուս ածանցյալ պահանջների մերժման:

Դատական ծախսերի լուծման հարցը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերը նշված իրավադրույթների լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, որոնք գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն՝ բացառապես տվյալ գործի շրջանակներում դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացված լինելու դեպքում:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից վճարվել է <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական տուրքի գումարը, իսկ հայցապահանջը մերժվել է, իսկ պետական տուրքից բացի այլ դատական ծախսեր առկա չեն, հետևաբար Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊ ընկերության՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2014թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետը, 2.2. կետը 3-րդ կետը, ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգով պայմանագիրը կնքելու մասին որոշման մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am